

# Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

## Թիֆլիսի սուեռոքական գազեր:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ զինը Մարտիցը մինչև Յունիսարը քաղաքումս՝ 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱ ՓԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղեթին ստորագրողի կարելի է խմբագրողի մօտ:

Գաղեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Ապրիլի 13-ին ստացած դեպեշան Պետերբուրգից: Տերութենի կարգադրութիւնները: Պարզեւներ, տորգեր: Փողի նշանակութիւնը առուտորի մէջ: Հայերէն գրքերի ընդհանուր ցուցակ շինելու առաջարկութիւնը: Միքայէլ Նալբանդեանցի մահը: Թիֆլիսի աղջկանց 1 կարգի ուսումնարանը: Պ. Բոնչեակու խօզրայի վրայ կարգացած դասերի մասին: Մեր օվանտականս գաղեթը շաբաթ իրիկուններով կարվանսարաններումը: Առեւտրական տեղեկութիւններ:

### ՏՈՐԳԵՐ:

Քութայիսի գաւառական կառավարութենումը Մայիսի 17-ին նշանակած է Ախալցխայի նահանգական ուսումնարանի շինութենի մէջը մէկ քանի փոփոխութիւններ անելու տորգը: Էս գործի համար նշանակած է 7,924 մ. 74 ու կէս կ:

Էլի Էստեղ Յունիսի 8-ին նշանակած է Քութայիսի պրավիանտի մագազինի քարաչէն պարիսպը շինելու տորգը: Էս գործի համար նշանակած է 2,602 մ. 76 կ:

Թիֆլիսի Պրավիանտի մագազինումը Ապրիլի 26-ին նշանակած է Էստեղի զանազան անպէտք նիւթերի ծախելու տորգը:

Ախալցխայի Ինժիների դիստանցիումը, որ գտնվում է Քութայիս քաղաքի մէջ նշանակած է Մայիսի 2-ին Սուխումումը 100 մարդու համար կաղարմա շինելու տորգը: Էս գործի համար նշանակած է 8,820 մ. 46 կ:

Ստավրոպոլի Կաղեօնի պալատումը Ապրիլի 29-ին նշանակած է Ստավրոպոլի հիւանդանոցի համար զանազան թաղաւորական առարկաներ շինելու ու կարելու տորգը:

Կովկասի Պրիկազումը Յուլիսի 4-ին նշանակած է Վելեամիւնովսկի և Խանսկի քուչեքումը զանված հանգուցեալ Պատուաւոր քաղաքացի վարդան Արչակունու ժառանգների տան ծախելու տորգը: Էս տան պարտքը—42,000 մ. վեր է առած Պրիկազից 1858 թւին:

### Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ապրիլի 23-1866:

Ո՛վ չէ սիրում փող: Մենք ամենքս էլ սիրում ենք փող, ոսկի, արծաթ: Ոսկով և արծաթով լեքը սնտուկները մեզ վրայ ի՞նչ ազդեցութիւն

են ունենում, չէ՞նք ծուկը գնում առաջը, մինչև անգամ պատրաստ ենք լինում պաշտելու: Մեզ համար ոսկին հարստութենի, իշխանութենի, փառքի և բաղդաւորութենի իղէան է: Վաճառականի և փողատիրոջ համար կեանքի, խելքի և առուտորի միջոցն է: Միայն մէկ կերպ ուսումնական մարդկանց համար, որոնք քաղաքական անտես են ասվում, ոսկին, ճրագուն, կաշին ալիւրը, զինին և սրանց նման միւս ապրանքները մի և նոյն են:

Փողը թէպէտ ապրանք է, բայց աղնիւ ապրանք է, այսինքն էնպիսի յատկութիւններ ունէ, որ ամեն ապրանքի վրայ կարելի է փոխել և սա է մենակ առուտորի միջոցը: Փողից է կախված ամեն սեռանկ ապրանքների շինելու, գործածելու և առուտորի որքանութիւնը: Երբ որ փող ունինք ամեն բան լաւ է գնում, իսկ փողի սակաւութենի ժամանակը ամեն բան ուշանում է, էհախբարը կորչում է, կուտր են ընկնում, ապրանքների գործածութիւնը քանում է և վաճառականները չեն իմանում ինչպէս ծախել իրանց ապրանքները: Մեր կեանքումը փողի ձեռքից ձեռք անցկիւնալը մի և նոյն նշանակութիւնն ունէ, ինչպէս արիւնը մեր մարմնի մէջը: Անփողութիւնը մի և նոյնն է մեր անտեսութենի համար, ինչ որ արնի սակաւութիւնը մեր առողջութենի համար: Արնի անկարգ վազելուց խախտվում է մեր առողջութիւնը, իսկ երբ արիւնն էլ չէ շարժվում մարդս մեռնում է. մի և նոյնը պատահում է և մեր կեանքումը, երբ որ փողի կարիք ենք ունենում: Փողը

### ԱՊՐԻԼԻ 13-ԻՆ ՍՏՕՅՕՄ ԴԵՊԵՇՍՆ

Պետերբուրգից:

Թաղաւորի վրայ յարձակվող շարագործը առիպվեցաւ ճշմարիտը խոտովանելու: Նրա անունն է Դիմիտրի Կարապետով, որն որ Սարատովի գաւառիցն է: Սա Մոսկովի համալսարանումը ազատ լսող է էլէլ և մեքանիկայի և խոփոսնիզրիայի ցաւեր է ունեցել, միշտ գանգատվելիս է էլէլ կեանքի ծանր լինելու վրայ և վերին աստիճանի սոցիալական մտքերով է էլէլ պարասպում: Չարագործի ընկերների և նրա ունեցած յարաբերութիւնների մասին շարունակվում է քննութիւնը:

### ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՊԱՐԳԵՒՆՆԵՐ:

Ապրիլի 17-ին: Գաղստանի զօրքի գլխաւոր հրամանատար Իշխան ԼՈՌՈՒՄԵԼԻՔԱՆՅԻՆ շնորհվեցաւ Բելի Օրիօլ (Սպլիտակ Արծիւ) նշանը:

\* Սոցիալիզմը փիլիսոփայական դիտութիւններից մէկն է, որի նպատակն է հասարակութենի ամեն բանումը հաւասարութենի հաստատելը:

սակաութենի ժամանակը բացի է հատի-  
բարի կորչելը, առուտուրը կանգնում է և  
ամեն բան սկսում է թանկանալ: Վա-  
ճառականը թանկ սկսում է ծախել, որով-  
հետև զիտէ, որ առնողներ քիչ կլինին և  
վախենում է կորցնել իր դրամադրու-  
փողը շահը բարձրանում է և առ հա-  
սարակ կեանքն էսպէս թանկանում է, որ  
ապրանքները ոչ պատրաստող են ունե-  
նում և ոչ գործածող: Էդ պատճառով  
է, որ փողը համարվում է հարստութե-  
նի իդէալ և հարուստը նա է համար-  
վում, ով որ շատ ունէ ոսկի և արծաթ:  
Ապրանք ունեցողները եթէ չունին ոսկի,  
դեռ չեն կարող հարուստ համարվիլ, որով-  
հետև առաջ նրանք պէտք է փոխեն իրանց  
ապրանքները ոսկու վրայ, բայց էդ ժա-  
մանակը կարելի է որ և իցէ պատճառով  
վեր ընկնի ապրանքի գինը ու վնաս տալ  
ապրանքի տիրոջը: Բայց ով որ ունէ փող,  
կ'նշանակէ նա ունէ կնպիսի ապրանք, որն  
որ միշտ համարեա թէ մէկ տեսակ գին  
ունէ, որովհետև ամենքն ունին փողը

հարկաւորութիւն: Փողատէրը ամեն տեղ  
իր գլխի տէր է, նրա ջիւրի փողն ու թուղթ  
խաղացողը ձեռին կողքը մի և նոյնն է:  
Քաղաքական անտեսներից մէկ քանիսն ա-  
տում են, թէ «որ ապրանքից շատ են  
ուզում, էնքան էն ապրանքի գինը բարձր  
է և ինչքան մէկ տեղ մէկ տեսակ ապ-  
րանքից շատ կայ, էնքան նրա գինը ցածր  
է: Փողի վրայ էլ նմանապէս էդ աչքով  
պէտք է մտիկ տալ, որովհետև փողն էլ  
բամբակի, թութուռի, շաքարի և հացի  
պէս մէկ ապրանք է: Ոսկուցն ու արծա-  
թից շոր կարել կամ հերակրի տեղ գործ-  
ածել անկարելի է, էս պատճառով ա-  
ւելի լաւ է մեր ոսկին և արծաթը սահ-  
մանից դուրս տանել և նրա տեղ թու-  
թուռ, շաքար, հաց և ուրիշ ապրանք-  
ներ առնել»: Էսպէս են կարծում ասա-  
ցինք մէկ տեսակ անտեսները և էս ուղ-  
ղութենի վրայ է հիմնվում ազգերի մէկը-  
մէկու հետ ունեցած աղատ առուտուրը:

Ճշմարիտ է, որ փողը զինքը բարձրա-  
նում է և ցած է ընկնում՝ հարցնողին  
մտիկ տալով, բայց էդ չի նշանակի թէ  
փողը և ուրիշ ապրանքները մի և նոյն

են: Տեղին և ժողովրդին մտիկ տալով  
փողի արժեքը միշտ կարող է փոխվել.  
մի և նոյն փողով կարելի է երբեմն աւելի  
երբեմն պակաս ապրանք առնել. բայց  
փողի նշանակութիւնը և յատկութիւն-  
ները ամեն տեղ էլ մի և նոյն են — փողը  
ամեն տեղ միշտ ուրախութենով են վեր  
առնում ապրանք ծախողները: Էդպէս  
ուրեմն փողը առուտուրի միջոց լինելով,  
ապրանք չէ, ինչպէս որ կարծում են արն-  
տեսները: Առանց թութուռի, շաքարի  
առուտուրը կարող է լինել, բայց քանի  
որ ամեն ապրանքների գին դնողը փողն  
է, առանց փողի առուտուրը անկարելի է:  
Փողը պակասութենից ժողովուրդը աղ-  
քատանում է և նեղ տեղն է ընկնում:  
Էդ հետևանքները, կարծում են քա-  
ղաքական անտեսները, մոնոպոլիայի և  
մաքսատների լինելուցն է:

Պրուստ է արդեօք թէ չէ փողի, մո-  
նոպոլիայի և մաքսատների վնասակարու-  
թիւնը կտեսնենք միւս անգամ:

Ա. Ե.

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԳԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅՈՒՅՄԿ  
ՇՐՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆԸ:

Պ. Միջայէլ Միանսարեանցը, որ հիմն  
բնակվում է Պետերբուրգ, ինչպէս երևում  
է «Մեղու Հայաստանի» 14 №-ից ա-  
ռաջարկում է մեր բոլոր վիճակաւոր  
Առաջնորդներին, հոգևոր և աշխարհա-  
կան Տաճկաստանի զանազան ազգային  
ժողովներին և ընկերութիւններին, զրա-  
տան կառավարիչներին և տէրերին, զը-  
րավաճառներին, տպարանատէրներին, զա-  
նազան հայերէն ժուրնալների և զազգեթ-  
ների խմբագրողներին և բոլոր ուսում-  
նական ու ուսումնասէր հայերին իր միտ-  
քը մէկ ընդհանուր ցուցակ շինելու, որ  
պարունակէ իր մէջ հայերէն բոլոր զը-  
րաւոր աշխատութիւնները: Էդ ցուցա-  
կումը պէտք է լինի 1.) բոլոր հին, թէ  
նոր հայերէն զբքերի, ժուրնալների, զա-  
զգեթների, օրացոյցների, զբացուցակների  
(կատալոգների) բրոշուրների և երաժշ-  
տական խաղերի անունները, նշանակե-  
լով նմանապէս աշխատասիրողն անունը,  
տպվելու տեղը, տպարանը, տարին և

քանի երես պարունակելը: 2.) Հայերէն  
պատկերների անունը, նրանց խորհուր-  
դը, մեծութիւնը, հեղինակի և փորա-  
զողի անունը, երբ և որտեղ տպվել,  
գինը և ծախվելու տեղը: 3.) Թէ վա-  
ղուցվայ և թէ հիմիկվայ հայերէն բոլոր  
ժուրնալների և զազգեթների, նմանապէս  
և տպարանների կարճաւոր պատմու-  
թիւնը, տեղեկութիւնները և հասցե-  
ները: 4.) Բոլոր հայերէն զբքեր ծախող  
զրավաճառների հասցեները և 5.) հայոց  
տղերանց և աղջկերանց թէ մեծ, թէ  
փոքր ուսումնարանների հասցեները և  
նրանց վրայ կարճաւոր ծանօթութիւ-  
նները: Յուցակը կտպի 1200 օրինակ և  
սրանցից մէկ կամ երկու օրինակով ձրի  
կուղարկի բոլոր հայ վեճակաւոր առաջ-  
նորդներին, վանքերին, ուսումնարաննե-  
րին, Տաճկաստանի ազգային ժողովներին  
և ընկերութիւններին, խմբագրողներին և  
զուավաճառներին:

Պատմելով թէ հայ տպագրութիւնը  
1565 թ-ից սկսվելով, հիմնվել է հետև-  
ուհետը առաջ վեներտիկ 1565 թ.,  
յետոյ Կ. Պոլիս 1567 թ., Հում 1584  
թ., Լեմբերգ 1616 թ., Միլան 1624  
թ., Պարիս 1633 թ., Չուղա 1640 թ.,  
Ամստերդամ 1660 թ., Մարսել 1673  
թ., Լեյքցիգ 1680 թ., Պադուա 1690  
թ., Կալկաթա 1713 թ., Էջմիածին  
1770 թ., Պետերբուրգ 1780 թ., Նոր  
Ղախիջևան 1790 թ., Աժտարխան 1793  
թ., յետոյ Թիֆլիս, Եռւշև և այլն, Պ. Մի-  
անսարեանցը յայտնում է, որ իր խնդ-  
րած տեղեկութիւնների հաղորդողը չու-  
ջարկէ վեներտիկումը և վեներտիկումը ար-  
պած հայերէն զբքերի անունները, որով-  
հետև էդ զբքերի ցուցակի ինքը կստա-  
նայ էն տեղերիցը ուղղակի:

Էսպիսի գործի հարկաւորութիւնը  
զգալով, ուրախալի է մեզ համար Պ. Մի-  
անսարեանցի առաջարկութիւնը, որ ի  
հարկէ աւելի ուրախալի կլինէր նրա կա-  
տարած տեսնելը: Բայց մենք կարծում  
ենք հարկաւոր էր նշանակել ժամանակի  
թէ քանի ժամանակումը պէտք է հաս-  
ցնվին էդ տեղեկութիւնները, եթէ չէ,  
ժամանակի անորոշ թողնելով, մեր ա-

անց էն էլ անհոգ պարոնները, կու-  
շայնեն իրանց հասցնելու տեղեկութիւ-  
ները, էսօր էգուց պցելով:

Մենք էլ մեր կողմից Պ. Միանսարեան-  
ցի առաջարկութիւնը յայտնումենք մեր  
կարդացողներին էն պարոններին, որոնք  
կամք ունին և կարող են կատարել նրա  
խնդիրքը, խոտտանալով նրանց և Պ. Մի-  
անսարեանցի մ.ջ միջնորդի պաշտօն կա-  
տարել՝ ղէպի մեզ ուղարկած նրանց ցու-  
ցակները ու տեղեկութիւնները ուղղակի  
ուղարկելով Պետերբուրգ Պ. Միանսա-  
րեանցին:

Յաւելով յայտնումենք մեր կարդացող-  
ներին, որ Ապրիլի 13-ին Սարատով գա-  
ւառումը վախճանվել է համարեա թէ բո-  
լոր հայերին յայտնի մեր ժամանակակից  
մատենագիր — ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ-  
ՅՐ: Սրա մարմինը բերվել է Նոր Նա-  
խիջեան թաղելու: Ասում ենք ցաւալի է  
մեզ էսպէս տխուր համբաւ տալը, որով-  
հետև շատ քիչ են մեղանում առ հասարակ  
նրա պէս երիտասարդներ, որոնք իրանց  
գրչով շուտ ու մուռ լինեն աված հայութե-  
նին վերաբերած հարկաւոր խնդիրները:  
«Հիւսիսափայլ» անունով ժուրնալը կարող  
ենք հաստատ ասել, որ եթէ ունէր արժա-  
նաւորութիւն — դա էր միայն էս հանգու-  
ցեալի աշխատութիւններով, որոնք որ  
տպվում էին առհասարակ կոմս Էմմանու-  
էլի անունով:

ՔԻՖԼԻՍԻ ԱՂԶԿԱՆՑ 1 ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱ-  
ՐԱՆԸ:

Քիֆլիսումը հերու Ապրիլի 11-ին բաց է-  
լա Քիֆլիսի առաջին կարգի աղջկանց ու-  
սումնարանը Նորին կայսերական Բարձրու-  
թիւն Օլգա Յէտոգորովնայի հոգացողութե-  
նով և էս տարի մի և նոյն օրը էդ ուսում-  
նարանը կատարել է իր տարեկարծի տօ-  
նը՝ հաշիւը տպելով «կովկաս» գաղեթի 29  
№-ը: Էդ հաշիւից երևում է, որ ուսումնա-  
րանումը ընդ ամենը 160 աշակերտուհի կայ,  
որոնցից 32 հայ է: Էդ ուսումնարանի որ և  
ից կերպով օգնողներից լիշում ենք էստեղ  
հայերին՝ Նիկողայոս Միրիմանեանցին, Նազար  
Միլովին, Յովակիմ Տէր-Ղազարեանցին, Իսա-  
հակ Մովսէսեանցին, Միքայէլ Տէր-Մէլիք-  
սեթեանցին, Գէորգ Բախնդուրեանցին, Գէորգ  
Չայդեանցին, Բեդլար Փերջանդեանցին և  
Ստեփան Շարոյեանցին, որոնք օր էդ ու-  
սումնարանի պատուաւոր անդամներն են և

կորը համար տալիս են ուսումնարանին ա-  
մեն մէկը 300 մ., իրաւունք ունենալով  
հազնել 8-դ կարգի մոնդիր, — Նիկողայոս  
Միրիմանեանցին՝ 500 մ. արժեցող կենդանա-  
բանութենի հարկաւոր նիւթերը ընծայելու,  
Յովհաննէս և Գարբէլ Միրզոյեանցներին,  
որոնք ընծայեցին 200 մ., Բոմանոս Նա-  
դիրեանցին, որ ընծայել է 50 մ., Յարու-  
թիւն Բաղալեանցին, որ ընծայել է 30 մ.,  
Մոսկովի Ղազարեան ուսումնարանին, որ ու-  
ղարկել է սրան 98 հատոր հայերէն գրքեր,  
զրաւաճառ Պ. Տէր-Միքայելեանցին, որ նը-  
մանապէս օգնել է գրքերով, քահանայ Տէր-  
Գրիգորեանցին և Ստեփան Ստեփանէին, որոնք  
էս ուսումնարանումը վարժապետի պաշտօն  
են կատարել:

Պ. ԲՕՆՉԵԻՍԿՈՒ ԽՕԼԵՐԱՅԻ ՎՐԱՅ ԿԱՐ-  
ՂԱՅԱՄ ԴԱՍԵՐԻ ՄԱՍԻՆ:

2.

Բոյսերի և կենդանիների փոելիս միշտ էն-  
պիսի կազեր են գոյանում, որ յետոյ եթէ  
մարդ սովորական օդի հետ ծծէ էդ կազերից,  
կարող է վնասվիլ, հիւանդանալ: Աւելի պարզ  
ասենք, քրտնքի հոտը, արտաքնոյնների ա-  
պականած օդը ու ամեն տեսակ վատ հոտե-  
րը վնաս են մարդու, որովհետև էն օդը, որը  
որ մենք ծծում ենք, շունչ ենք անում,  
հարկաւոր է մեղ նոր կերակուր տալու մեր  
արնին. բայց երբ որ մեր ծծած օդի մէջը  
խառն են և զանազան վատ կազեր, էն ժա-  
մանակը մեր արիւնը քիչ կերակուր է ըս-  
տանում, կամ ստանում է բայց վատը և արիւ-  
նը երակներումը փոխանակ կանոնաւոր շարժ-  
վելու — կամաց է շարժվում և յետոյ սկսում  
է բոլորովին սառչիլ, որից առաջանում է  
մարդու մահը: Ուրեմն մարդու առողջու-  
թիւնը պահպանելու զիտաւոր պայմաններից  
մէկն է մաքուր օդը, որովհետև ապականած  
օդը հիւանդութիւն է առաջացնում: Խօլերան,  
հարինքը և չուման, ինչպէս յայտնի է, առա-  
ջանում են նմանապէս ապականութիւններից:  
Էդ երեք հիւանդութիւնները դիպող հիւան-  
դութիւններ են: Չումայով, խօլերայով կամ  
հարնքով հիւանդը ինքը սկսում է ապակա-  
նել էն սենեակի օդը, որի մէջը ինքն է՝ քրտ-  
նելիս ու փորումը լուծելիս: Մանաւանդ էս  
վերջինի հոտը, այսինքն դրանից բաժան-  
ված կազերը կարող են բոլորովին առողջ  
մարդու հիւանդացնել էն հիւանդութիւնով և  
սպանել: Շատերը գիտեն, որ հարնքաւորի  
հետ կարելի է նստել, խօսել բոլորովին ան-  
վնաս, սյլ պէտք է զգոյշ կենալ և շունչ

քաշել, այսինքն փախչել էն հարնքաւորի  
սենեակից նրա քրտնելիս և փորումը լուծե-  
լիս: Խօլերան էլ հենց էդքան է միայն դիպ-  
չող հիւանդութիւն:

Խօլերայի բուժն է Հնդկաստանումը Գան-  
գէս գետի ափերը, որտեղից յետոյ հիւանդա-  
ցածները էս կողմն էն կողմը ճանապարհոր-  
դելիս տանում են իրանց հետ էդ հիւանդու-  
թիւնը: Գանգէս գետը ծովը թափվելիս շատ  
մանր ճիւղեր է բաժանվում, որոնցից ամեն  
մէկը ճահիճներ է կազմում: Էդ ճահիճներումը  
բնակվում են զանազան կենդանիներ: Չրի  
մեծանալիս կենդանիները խելադուրում են,  
ածած մնում են էնտեղ երկար ժամանակ շրի-  
վեր ընկնելուց յետոյ և հարաւային տաք ա-  
րեգակը փոտցնում է քիչ քիչ էդ կենդանի-  
ները, տարածվում սաստիկ աղականութիւնը,  
Հնդկացիք ծծում են էդ օդը, սկսում է նը-  
րանցը լուծել սաստիկ և առաջանում է խօ-  
լերա սասած հիւանդութիւնը: Հնդկացիք իբրև  
աղքատ և տղետ աղք պատրաստ չեն էդ ցա-  
ւի առաջն առնելու և զո՛ն են դառնում դը-  
րան հաղարներով: Շատ շուտ տարածվում է  
խօլերան և մանաւանդ էդ հիւանդութենի  
տարածվելիս մեծ նշանակութիւն ունեն հի-  
ւանդի լուծածը և նրա շորերը:

Հերու, 1865 թիւն Հնդկացի մահմետական-  
ները Մեքքա Ղուրբան Բայրամի տօնինանթիւ  
քաղցած ու աղքատ մահմետականներ էին  
եկել աշխարհի ամեն ծէրերից Մահմեդի գե-  
րեզմանին ուխտ: Ուխտաւորները Մեքքայից  
յուճիսի սկզբներումը բերին Ալէքսանդրիա,  
կարճ ժամանակումը մեռաւ էնտեղ 3000 հո-  
դի: Կայր քաղաքումը երկու ամսուայ մէջը  
մեռաւ 6112 հոդի: Շոգենաւները Ալէքսան-  
դրիայից տարածեցին խօլերան Եւրոպա և  
Ասիա: Յունիսի 24-ին Իզմիրումը սկսվեցաւ  
կոտորվածքը, որտեղ ամելի սաստիկ էր ներ-  
դործում Հրէից նեղ և կեղտոտ թաղումը: Յու-  
լիսի սկզբներին Ալէքսանդրիայից չոզնաւով  
եկաւ Կ. Պոլիս: Էդ քաղաքումը օրը 932  
հոդի էր մեռնում խօլերայից: Տէրութիւնը էն-  
քան տեղը անպատրաստ էր էդ ցաւի առաջն  
առնելու, որ մէկ էնպէս նշանաւոր օգնու-  
թիւն չկարողացաւ տալ ժողովրդին: Յուլիսի  
13-ին խօլերան երեկեցաւ Տրապիզոն: Օգոստո-  
սի 12-ին հասաւ Փոթի և 19-ին երեկեցաւ Քու-  
թայիս էս քաղաքումը ցաւը վերջացաւ Հոկ-  
տեմբերի 8-ին, բայց մէկ ամսից յետոյ նո-  
րից սկսվեցաւ Քութայիսումը ամեն կողմե-  
րից գիւղացւոց ժողովվելու պատճառով, իրանց  
ազատութենի բարձրագոյն հրավարտակը լը-  
սելու: Օգոստոսի վերջերին Քիֆլիսումն էլ  
սովորական ամառուայ փառի լուծմունքները  
խօլերայի ձև ստացան: Օգոստոսի 25-ին և

կառ Քուժայիսից Թիֆլիս Գաղղիացի Պ. Սէրին իր գերազատանով սա էր քաղաքումս խօլերայով առաջին հիւանդացողը: Սկստեմքերի սկզբին աւելացաւ քաղաքումս հիւանդութիւնը, բայց սաստիկ չէր, էնպէս որ Սեայ տեմբերի 1-ից մինչև Նոյեմբերի 1-ը բաց ի ղինուորականները Թիֆլիսումը հիւանդացան խօլերայով 353 հոգի, որոնցից 161-ը մեռաւ: Հիւանդացածները ըստ մեծի մասին խեղճ ու աղքատ բնակիչներն էին: Զինուորական հիւանդանոցումը 221 հոգի հիւանդացաւ, սրանցից 118-ը մեռաւ: Խօլերան Քուժայիսից գալիս Հոկտեմբերի կիսին զիպաւ Սուրբաճ, Գորի և միևնոյն ժամանակը երևեցաւ Ելիսաւետոպօլի նահանգումը: Հոկտեմբերի կիսից ըսկալած խօլերան երևեցաւ Երևան, որտեղ բերած էր էդ ցաւը նմանապէս Պարսկաստանից Նախիջևան քաղաքով: Երևան 35 օրումը հիւանդացաւ ղինուորներից 118 հոգի, որոնցից 35-ը մեռաւ, իսկ բնակիչներից հիւանդացաւ 392 հոգի, որոնցից մեռաւ 160 հոգի: Երևանից յետոյ սաստիկ էր խօլերան Նոր Բայազէդի և Էջմիածնայ նահանգներումը: Նոյեմբերին վերջացաւ խօլերան Թիֆլիսումը, իսկ ղեկտեմբերին բոլորովին կովկասի կողմերումը:

Թէ որտեղ մնաց խօլերան մեր երկրումը և որտեղից կարող է նա սկսվել նորից, էդուր մասին կխօսենք միւս անգամ:

Ա. Ե.

**Մեր «Վ.Ա.Ճ.Ա.Ռ.Ա.Կ.Ա.Ն» Գ.Ա.Ջ.Ե.Թ.Ը ՇԱԲԱԹ ԻՐԻԿՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՐՎԱՆՍԱՐԱՆՆԵՐՈՒՄԸ:**

Կարլանտարաններից մէկումը շարաթ իրիկ նապահին մէկ վաճառական իր ընկերոջ հետ միասին ճրագի չորս կողմը նստած հաչիւ էին տեսնում և փողեր համրում:

—Սարգիս, հարցրեց էդ պարոններից մէկը իր աշակերտին, որ մէկ քսան տարեկանս անցայ էր, չուտ կու բերիմ, կօսէ:

Սարգիսը կանգնած էր դռների մօտ և լուռ ու մունջ մտիկ էր տալիս իր աղաների փող համրելուն:

—Երեք հարուր թումանը հազիր ունէր ու թուրքին էր մնում, որ երկու հարուրն էլ ստանայ ու բերէ, պատասխան տվեց Սարգիսը:

—Էլ ի՞նչ անար... Աղբաթըսէր, կէս զիշիր կի դառաւ ու: Կօսէր քիզ ին մնում էր կու էրկու մարդ, շորեսա սահաթի ինն է, ուշացրուց հերիք չէ, էրկու իրիք սահաթ էլ նրա փթած մանէթներու համբերուն կու պէտք զանք: Ախար մինք էլ տալացու ու-

նինք, Մարդ էնէնց բան պիտի բռնէ, վուր... Ղումըը լաւ ծածկեցիր, շտապով հարցրուց յետոյ նա իր Սարգիսն:

Սարգիսը ղլուլը շարժելով միայն պատասխան տվեց, որ ծածկել է:

Լուսթիւնը տիրեց էլի էն սննհակումը և միայն համրիչի (չօթիկի) չխչխկոցի ձէնն էր լսվում, ուրիշ ոչինչ:

Գիշերվայ տասնի կէսն էր:

Յանկարծ սրանց դռներին մէկը սաստիկ ղիպաւ և սկսեց դուռը ձեռել:

—Էկաւ, ասաց վաճառականներից մէկը, դրտուցեցաւ աթոռի վրայ և սեղանի վրայ գարսած թղթերն էլ յետ քաշեց ու տեղ բաց արաւ՝ բերած փողերը համրելու:

—Չարա էլաւ բերելու, ասաց միւս վաճառականը, ակնոցները աչքին դնելով: Բաց արանքս, հրամայեց շտապով Սարգիսն:

Բայց դեռ Սարգիսը հաղիւ թէ բաց էր արել դռները, որ վաճառականը քիչ բարձրացաւ տեղիցը և ասաց «համեցէք»: Բայց փոխանակ սպասած մարդու տուն դալու, ղըրսիցը մէկ ձեռը ներս եկաւ մէկ սարած թուղթ բռնած:

—Էս ինչ է, հարցրուց էն տղային Սարգիսը:

—«Վաճառական» դաղթի էդուցվայ նու մերն է:

—Ով է, հարցրուց էնտեղից վաճառականը:

—Գաղթ է, ասում է:

—Քու հէրն էլ անիծած ու քու դաղթիինն էլ:

Ղըշմնլ, նուբգար իմքին իս բերի քու հօրն օղորմի: Կէս ղիշիրին էլ գանիրը ղիղխկեցնումիս: Ղննց կուէր, թէ ինչկի էքուց մուլափ էիր սոլի, փլավը կու սառէր, չէ. ղիփ դրա կարթալու ալերսումը չիմ: Շատ հարկատու է, թէ իսկի էլ չէր բերի, ախմախ: Իս էստի փուղի իմ մնում, անկա ձամիլի վրայ է, սա կի ինձ համա դաղթիիր է բերում... իս դրա մոգոնողի... Թէ ձիր «վաճառականը» չէլաւ, չիմ կանայ, օվ ղիղէ, առուտուր անի այ: Խիլքէ վուր կու սորվիմ ձիղթն: Էստի բամբակը վեր է ննդի, Չգրու արաքումիմ, ինձ համա «լալօի նահալիք»ին գրում, բեղզաղնիր...:

—Էդ դուն իս գրվի, հարցրուց ժպտալով միւս վաճառականը:

—Տօ, ասկի բան էր էլի: Կակուլիչը եախէս բռնից, թէ էրկուս ու տաս շաի է, կօսէ, տուն ու պրծի: Ան ինչի, ասում է ուրախ չիս, վուր էսէնց հիշտ իս պրծնում: Ասկաին բան է, կօսէ: Մախլան...:

Կէս սահաթից յետոյ սպասած փողերը ըստացան ու գնացին:

Ա. Ե.

**ԱՌՆԻՏՐԱՒԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ .**

Լօնդոն Ապրիլի 3:

Վերջին ժամանակներումս մէկ քանի երեւելի առևտրական ընկերութիւններ կուտը ընկան, որոնց հաշուան է 4 միլիօն մանէթով կուտը ընկած Պէնտօ Պերես և ընկ. զառաքիչ:

Նոր Օրլէան (Ամիրիկայում) Մարտի 22

Բամբակը ցած ընկաւ՝ Եւրոպայումը պատերազմի լուրեր սարածվելու պատճառով:

Լիվերպուլ Ապրիլի 2:

Էսոր ընդամենը 5000 հակ բամբակ ծախվեցաւ:

Մարտի Ապրիլի 15:

Ապրէշումի ղները բարձրացան: Նուվայ լաւ տեսակներին 22 մանէթ են տալիս փթին:

Պետերբուրգ Ապրիլի 7:

Կուրսերը Լօնդոնի վրայ 3 ամիս ժամանակով—29 1/4 պենս:

Պարիժի վրայ . . . 305 ամնալիմ:

5 0/0 Լատարեյով առաջին փոխառութենի տոմսակները . . . 109 5/8 ման:

5 0/0 Լատարեյով երկրորդ փոխառութենի տոմսակները ծախվում են բանկումը —105 1/2 ման:

Ռսկին . . . . . 6 մ: 68 կ:

Օղեսա Ապրիլի 1:

Վեքսիլի կուրսը Մարտի վրայ—313 1/8 ամնալիմ:

Թիֆլիս 1866 Ապրիլի 23:

Բամբակի առուտուրը էլի տխուր ղըրութենի մէջն է: Վախենում են 10 մ կամ 9 մ: 50 կ. առնելու:

Բուրղը . . . . . —

Լեղակը . . . . . —

Ինգլիզու շաքարը 9 մ: 60 կ:

Ռսկինը . . . . . 10 մ: 80 կ:

Արծաթը 72 պրօբի . . . . . 50 մ:

— 84 պրօբի . . . . . 240 մ:

Ռսկին . . . . . 6 մ: 60 կ:

Ա. Ե.